Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻՆ՝ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՌԻԹՈՎ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 31 օգոստոսի 2000 թ.:

Նորին Սրբություն Գարեգին Բ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը 2000-2001 ուսումնական տարվա բացման առիթով Հայրապետական օրհնությամբ հետևյալ շնորհավորական ուղերձն է հղել կրթական հաստատությունների ուսանողներին և ուսումնական գործի բոլոր նվիրյալներին.

«Նոր հույսերով է սկսվում ուսումնական տարին, որպես լույսի ճանապարհ, որ առաջնորդում է դեպի գիտելիքի ու արժեքների ճանաչողության մեծասքանչ աշխարհ:

Ուսումնասիրելիչ ու ոգեպաշտ մեր ժողովուրդը բազմատիրոջ իր պատմության ողջ ընթացքում հոգևորով իմաստ է հաղորդել իր կյանքին, կարևորել գիտությունն ու արվեստը և միտք ու հոգի կերտող, ջանասիրությամբ ու երջանկությամբ լեցուն ուղին՝ ուսումն ու կրթությունը: «Ճանաչել գիմաստութիւն և գիտութիւն, իմանալ զբանս հանճարոյ» հայերեն առաջին գրավոր նախադասության ուղեկիցը խորհրդով հայոց Մահակ-Մեսրոպյան դպրոցը առաջնորդել ու պիտի առաջնորդի հայորդիներին՝ ոգեշնչելով ու զորացնելով Աստվածաշնչյան անանց ճշմարտությամբ:

Միրասուն սաներ կրթական հաստատությանց՝ աշակերտներ և ուսանողներ, ուսումնական շնորհակալ գործի բոլոր նվիրյալներ. Լուսո Խորան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ջերմորեն ողջունում և սրտաբուխ Մեր շնորհավորանքներն ենք բերում Ձեզ 2000-2001 ուսումնական տարվա բացման բերկրաշաչ առիթով: Հայրական սիրով և Հայրապետական օրհնությամբ մաղթում ենք, որ Տերը շնորհազարդի և հաջողություններ պարգևի Ձեզ նոր ուսումնական տարում՝ բեղուն դարձնելով Ձեր ընթացքը ուրախաբեր արդյունքներով: Թող Թարգմանչաց արարող ոգին ուղեկից լինի ձեզ՝ հանուն մեր նախնյաց սուրբ հիշատակի, հանուն մեր ժողովրդի այսօրվա ու գալիքի:

Օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ»